**Նախագիծ**

**Կ-962-12.11.2024-ԳԿ-011** **Երկրորդ ընթերցում**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքի նպատակն է երիտասարդության ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականության իրավական հիմքի ստեղծումը, երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացների ապահովումը, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական կենտրոնների միջև ծագող իրավահարաբերությունների կարգավորումը:

## ԳԼՈՒԽ 1

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 1. Երիտասարդական քաղաքականության մասին օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության իրականացման գործընթացում ներգրավված սուբյեկտների և պետական կառավարման մարմինների միջև ծագող իրավահարաբերությունները:

### Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

**1) երիտասարդ՝** 13-ից մինչև 35 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձ,

**2) պետական երիտասարդական քաղաքականություն՝** Կառավարության կողմից ընդունված ծրագրերի և միջոցառումների համակարգ, որը միտված է երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային և սոցիալական բնույթի այլ հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը և այդ լուծումների շուրջ հանրային դիսկուրսի ձևավորմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների ընդգրկվածության ապահովմանը և որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացմանը,

**3) երիտասարդական աշխատանք՝** երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացու ձևավորմանն ուղղված աշխատանք,

**4) Երիտասարդական աշխատող՝** անձ, ով իրականացնում է երիտասարդական աշխատանք՝ վճարովի (համայնքային ծառայության կամ վճարովի ծառայությունների մատուցմամբ կամ աշխատանքային պայմանագրային հարաբերություններով) կամ կամավորության սկզբունքով,

**5) երիտասարդական ծրագիր՝** պետական երիտասարդական քաղաքականությունից բխող պլանավորված միջոցառումների համակարգ,

**6) երիտասարդական միջոցառում՝** երիտասարդական ծրագրերի իրականացմանն ուղղված պլանավորված գործողություն, որն իրականացվում է երիտասարդների համար, երիտասարդների կողմից կամ նրանց մասնակցությամբ,

**7) երիտասարդ ընտանիք՝** ընտանիք, որտեղ ամուսիններից առնվազն մեկը 18-ից 35 տարեկան է և ամուսինների գումարային տարիքը չի գերազանցում 70-ը կամ երեխա ունեցող միայնակ ծնող, որի տարիքը չի գերազանցում 35-ը,

**8) երիտասարդական կազմակերպություն՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն, որի կանոնադրությամբ նախատեսված է երիտասարդական աշխատանքի և երիտասարդական ծրագրերի իրականացումը և որի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են, իսկ անդամություն չունեցող կազմակերպությունների դեպքում՝ կառավարման մարմնի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են,

**9) երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմին՝** երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմին՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առեւտրային կազմակերպություն, որը Հայաստանի Հանրապետության տարածքում միավորում է երիտասարդական եւ երիտասարդության հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ներկայացնում է երիտասարդների շահերն ու իրավունքները եւ ազգային ու միջազգային մակարդակներում հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցչական մարմին, որը պետության հետ՝ ի դեմս լիազորված մարմնի, պետք է ունենա կնքված սոցիալական գործընկերության մասին համագործակցության հուշագիր: Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի առնվազն 2/3-ը պետք է բաղկացած լինի երիտասարդական կազմակերպություններից, իսկ կառավարման բարձրագույն մարմնի անդամների առնվազն 2/3-ը պետք է լինեն երիտասարդներ: Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի անդամակցության չափանիշները եւ կարգը սահմանվելու են միացյալ մարմնի կանոնադրությամբ: Այն գործելու է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից անկախ եւ կնքված հուշագրի հիման վրա,

**10) երիտասարդական նախաձեռնող խմբեր՝** իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող երիտասարդների ինքնակազմակերպման արդյունքում ձևավորված խումբ, որի գործունեությունը բխում է պետական երիտասարդական քաղաքականությունից,

**11) Երիտասարդական կենտրոն՝** պետության կամ համայնքի կամ ոչ պետական կազմակերպությունների կողմից կամ նրանց միջև երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ իրավաբանական անձի կառուցվածքային ստորաբաժանում որը իրականացնում է երիտասարդական աշխատանք, կազմակերպում է ինտելեկտուալ ժամանց և իրականացնում է պետական երիտասարդական քաղաքականությունից բխող ծրագրեր և միջոցառումներ,

**12) Երիտասարդական ուսումնասիրություն՝** երիտասարդության հարցերին առնչվող հետազոտական գործողություն, որն ուղղված է երիտասարդների վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրմանը, նրանց ակնկալիքների, ձգտումների, երիտասարդների կյանքում առկա և պոտենցիալ մարտահրավերների և հնարավորությունների, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության և երիտասարդական աշխատանքի վրա ազդեցություն ունեցող երիտասարդների սոցիալական, հոգեբանական, տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ազդեցությունների չափմանը,

**13) Համայնքի երիտասարդական քաղաքականություն՝** պետական երիտասարդական քաղաքականությունից բխող համայնքային առանձնահատկությունները արտացոլող պլանավորված միջոցառումների համակարգ:

**Հոդված 3 Երիտասարդական քաղաքականության սկզբունքները**

1. Երիտասարդական քաղաքականության սկզբունքներն են՝

**1) երիտասարդության՝** որպես երկրի զարգացման շարժիչ ուժի դիտարկում՝ ապահովել տարբեր ոլորտային ծրագրերում երիտասարդության շեշտադրումը,

**2) մասնակցություն՝** հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների, երիտասարդական նախաձեռնող խմբերի ներգրավվածության կարևորում,

**3) փաստահեն երիտասարդական քաղաքականություն՝** պետական երիտասարդական քաղաքականության և ծրագրերի մշակումն իրականացնել հուսալի և այժմէական ուսումնասիրությունների, մշտադիտարկումների, գնահատումների և այլ փաստերի հիման վրա,

**4) համաժամանակեցված երիտասարդական քաղաքականություն՝** մշակել պետական երիտասարդական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության զարգացման հեռանկարային ռազմավարությունների հիման վրա՝ ուղղված դրանց իրականացմանը կամ իրականացման նախադրյալների ստեղծմանը: Ուղղորդվել հստակ սահմանված

ռազմավարական նպատակներով և յուրաքանչյուր գործողություն կառուցել ձեռքբերված նվաճումների և արդյունքների հիման վրա,

**5) չափելիություն՝** սահմանել պետական երիտասարդական քաղաքականության իրականացման արդյունքները և այդ արդյունքների չափման մեխանիզմները,

**6) ներառականություն՝** յուրաքանչյուր երիտասարդի համար՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովվում, երիտասարդության ոլորտում իրականացվող ծրագրերին առավելագույն մասնակցության ապահովվմանը ուղղված քայլերի իրականացում:

## ԳԼՈՒԽ 2

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Հոդված 4. Երիտասարդական քաղաքականության սուբյեկտները

1. Երիտասարդական քաղաքականության սուբյեկտներ են՝ երիտասարդական քաղաքականությունն իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, երիտասարդական կազմակերպությունները, երիտասարդական կենտրոնները, երիտասարդական աշխատողները, երիտասարդական նախաձեռնող խմբերը և երիտասարդները:

### Հոդված 5. Երիտասարդական քաղաքականության բնագավառում Կառավարության իրավասությունները

1. Կառավարության իրավասություններն են՝

1) հաստատել պետական երիտասարդական քաղաքականության զարգացմանը նպաստող ռազմավարական փաստաթուղթը, որն ուղղված է ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ երիտասարդի ձևավորմանը՝ ընդլայնելու իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու երիտասարդի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը,

2) հաստատել երիտասարդներին և երիտասարդ ընտանիքներին աջակցման ծրագրերը:

### Հոդված 6. Երիտասարդական քաղաքականության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները

1. Պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

1) համակարգել պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում իրականացվող միջոցառումները,

2) հաստատել երիտասարդական կենտրոնների գործունեության կարգն ու մեթոդաբանությունը,

3) հաստատել պետության և համայնքի կողմից հիմնված երիտասարդական կենտրոնների օրինակելի կանոնադրությունը,

4) հաստատել երիտասարդական նախաձեռնող խմբերի աջակցման մեթոդաբանությունը,

5) հաստատել համայնքի երիտասարդական քաղաքականության մշակման մեթոդաբանությունը,

6) հաստատել երիտասարդական աշխատողի վերապատրաստման կարգը, որակավորման չափանիշները և երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությունը,

7) հաստատել միացյալ մարմնի ընտրության կարգը և պայմանները,

8) իրականացնել երիտասարդների կարիքների վերաբերյալ ամենամյա երիտասարդական ուսումնասիրություն՝ ապահովելով տարանջատված տվյալների առկայությունը և հրապարակել տարեկան զեկույց լիազորված մարմնի պաշտոնական կայքէջում,

9) իրականացնել պետական ծրագրերում երիտասարդության բաղադրիչի վերաբերյալ փորձագիտական վերլուծություն,

10) ապահովել պետական երիտասարդական քաղաքականության մշտադիտարկումը,

11) ապահովել միջգերատեսչական համագործակցությունը, ինչպես նաև այլ ոլորտային ռազմավարություններում երիտասարդների կարիքների և ակնկալիքների ներառումը:

**Հոդված 7. Երիտասարդական քաղաքականության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները**

1. Տեղական ինքնակառավարման մարմնի իրավասություններն են՝

1) համայնքի ղեկավարը, ելնելով համայնքի երիտասարդների կարիքներից, ակնկալիքներից, ձգտումներից, երիտասարդների կյանքում առկա և պոտենցիալ մարտահրավերներից և հնարավորություններից, ինչպես նաև պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարական ծրագրով սահմանված առաջնահերթություններից, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մեջ ներառում է երիտասարդական ծրագրեր, մշակում է և ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի երիտասարդական քաղաքականությունը,

2) համայնքի ղեկավարը համայնքի երիտասարդական քաղաքականության մշակումն ու իրականացումն ապահովելու նպատակով համայնքի աշխատակազմի աշխատողներից առնվազն մեկի գործառույթներում սահմանում է երիտասարդական աշխատողի

գործառույթները կամ համայնքի ղեկավարի հայեցողությամբ առանձնացնում երիտասարդական աշխատողի առնվազն մեկ հաստիք,

3) համայնքի ղեկավարը համայնքում հիմնադրում է երիտասարդական կենտրոն կամ աջակցում է համայնքում երիտասարդական կենտրոնի հիմնադրմանը և գործունեությանը,

4) օրինակելի կանոնադրության հիման վրա ավագանու որոշմամբ համայնքի ղեկավարը հաստատում է համայնքի կողմից ստեղծվող երիտասարդական կենտրոնի կանոնադրությունը,

5) համայնքի ղեկավարը հաստատում է համայնքի կողմից ստեղծվող երիտասարդական կենտրոնի գործունեության տարեկան կամ բազմամյա ծրագիրը,

6) համայնքի համագործակցությամբ ստեղծվող երիտասարդական կենտրոնների դեպքում համայնքի և գործընկեր կառույցների միջև կնքվող համագործակցությունը սահմանող իրավապայմանագրային փաստաթղթով սահմանվում են երիտասարդական կենտրոնի գործառույթները՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությամբ սահմանված գործառութային նպատակները,

7) համայնքի ղեկավարը աջակցում է համայնքում կազմակերպվող երիտասարդական միջոցառումների իրականացմանը,

8) համայնքի ղեկավարը համայնքի երիտասարդներին և երիտասարդական քաղաքականության մյուս սուբյեկտներին մասնակից է դարձնում համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և երիտասարդներին առնչվող այլ ռազմավարական փաստաթղթերի մշակմանը, իրականացմանը, ինչպես նաև մշտադիտարկմանը և գնահատմանը,

9) համայնքի ղեկավարը մասնակցություն է ունենում պետական երիտասարդական քաղաքականության իրականացման աշխատանքներին:

2. Երևան քաղաքում ստեղծվող համայնքային երիտասարդական կենտրոնը մասնաճյուղեր է ունենում բոլոր վարչական շրջաններում:

**Հոդված 8. Երիտասարդները, երիտասարդական նախաձեռնող խմբերը, երիտասարդական աշխատողները, Երիտասարդական կազմակերպությունները և երիտասարդական կենտրոնները**

1. Երիտասարդները իրավունք ունեն օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցել պետության և համայնքի կողմից երիտասարդներին ուղղված քաղաքականությունների մշակմանը, դրա շրջանակներում նախատեսված ծրագրերին և միջոցառումներին, որպես անհատ հանդես գալ սեփական նախաձեռնություններով և մասնակցել ու առաջարկություններ ներկայացնել պետական կամ համայանքային մակարդակներում կայացվող որոշումների շրջանակներում:

2. Երիտասարդական նախաձեռնող խմբերը կարող են հանդես գալ նախաձեռնություններով, մշակել և իրականացնել երիտասարդության շրջանում տարբեր ծրագրեր և միջոցառումներ, աջակցել երիտասարդական աշխատողներին համայնքներում իրականացվող երիտասարդական աշխատանքին:

3. Երիտասարդական աշխատողն իրականացնում է երիտասարդների կարիքների և ակնկալիքների վերհանմանը, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը և որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը միտված աշխատանք:

4.Երիտասարդական աշխատանքի տեսակները, աշխատանքի առանձնահատկություններով և երիտասարդների տարիքային խմբով պայմանավորված, սահմանվում են երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությանբ:

5. Երիտասարդական կազմակերպությունը կարող է մասնակցել պետության կողմից երիտասարդությանն ուղղված ոլորտային քաղաքականությունների մշակման աշխատանքներին:

6. Երիտասարդական կենտրոնը գործում է երիտասարդական աշխատանքի սկզբունքներով և մեթոդաբանությամբ, ունի համապատասխան աշխատակազմ, նյութատեխնիկական միջոցներ և ֆիզիկական տարածք, իրականացնում է երիտասարդական աշխատանք և երիտասարդական ծրագրեր, կարող է մասնակցել համայնքի երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացման աշխատանքներին:

## ԳԼՈՒԽ 3

## ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Հոդված 9. Պետական երիտասարդական քաղաքականության մշակումը և իրականացումը

1. Պետական երիտասարդական քաղաքականությունը մշակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության, երիտասարդական քաղաքականության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական կենտրոնների եւ երիտասարդների հետ համագործակցության եւ մասնակցության սկզբունքների պահպանմամբ:

2. Պետական երիտասարդական քաղաքականությունը մշակում և իրականացնում է Երիտասարդական քաղաքականության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմինը:

**Հոդված 10. Պետական երիտասարդական քաղաքականության գնահատումը**

1. Պետական երիտասարդական քաղաքականության ազդեցությունը գնահատելու համար իրականացվում են երիտասարդական ուսումնասիրություններ և վերլուծություններ:

2. Իրականացված երիտասարդական ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա վերանայվում են պետական երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունները և թիրախային ներդրումները:

**Հոդված 11. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

3. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերը ուժի մեջ են մտնում համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման պահին:

4. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերը տեղական ինքնակառավարման մարմինների վրա տարածվում են համայնքում համայնքային երիտասարդական կենտրոնի ստեղծման պահից:

***ՏԵՂԵԿԱՆՔ***
***ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ***

~~Կ-962-12.11.2024-ՊԿ-011/1~~

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքի նպատակն է երիտասարդության ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականության իրավական հիմքի ստեղծումը, երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացների ապահովումը, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական կենտրոնների միջև ծագող իրավահարաբերությունների կարգավորումը:

## ԳԼՈՒԽ 1
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1. Երիտասարդական քաղաքականության մասին օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության իրականացման գործընթացում ներգրավված սուբյեկտների և պետական կառավարման մարմինների միջև ծագող իրավահարաբերությունները:

**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

**1) երիտասարդ՝** 13-ից մինչև 35 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձ,

**2) պետական երիտասարդական քաղաքականություն՝** ~~Հայաստանի Հանրապետության~~ Կառավարության կողմից ընդունված ծրագրերի և միջոցառումների համակարգ, որը միտված է երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային և սոցիալական բնույթի այլ հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը և այդ լուծումների շուրջ հանրային դիսկուրսի ձևավորմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների ընդգրկվածության ապահովմանը և որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացմանը~~: Պետական երիտասարդական քաղաքականությունը ուղղված է ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ երիտասարդի ձևավորմանը՝ ընդլայնելու իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու երիտասարդի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը~~,

**3) երիտասարդական աշխատանք՝** երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացու ձևավորմանն ուղղված աշխատանք~~: Երիտասարդական աշխատանքը միտված է երիտասարդների կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների եւ նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական,~~

~~սոցիալ-տնտեսական եւ մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը եւ որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը~~,

**4) Երիտասարդական աշխատող՝** անձ, ով իրականացնում է երիտասարդական աշխատանք՝ վճարովի (համայնքային ծառայության կամ վճարովի ծառայությունների մատուցմամբ կամ աշխատանքային պայմանագրային հարաբերություններով) կամ կամավորության սկզբունքով,

**5) երիտասարդական ծրագիր՝** պետական երիտասարդական քաղաքականությունից բխող ~~երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների եւ նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը եւ որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը ուղղված~~ պլանավորված ~~միջոցառում կամ~~ միջոցառումների համակարգ,

**6) երիտասարդական միջոցառում՝** երիտասարդական ծրագրերի իրականացմանն ուղղված պլանավորված գործողություն, որն իրականացվում է երիտասարդների համար, երիտասարդների կողմից կամ նրանց մասնակցությամբ,

~~6) երիտասարդական միջոցառում՝ պետական երիտասարդական քաղաքականությունից բխող երիտասարդական ծրագրերի իրականացմանն ուղղված պլանավորված գործողություն,~~

**7) երիտասարդ ընտանիք՝** ընտանիք, որտեղ ամուսիններից առնվազն մեկը 18-ից 35 տարեկան է և ամուսինների գումարային տարիքը չի գերազանցում 70-ը կամ երեխա ունեցող միայնակ ծնող, որի տարիքը չի գերազանցում 35-ը,

**8) երիտասարդական կազմակերպություն՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն, որի կանոնադրությամբ նախատեսված է երիտասարդական աշխատանքի և երիտասարդական ծրագրերի իրականացումը և որի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են, իսկ անդամություն չունեցող կազմակերպությունների դեպքում՝ կառավարման մարմնի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են,

**9) երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմին՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առեւտրային կազմակերպություն, որը Հայաստանի Հանրապետության տարածքում միավորում է երիտասարդական եւ երիտասարդության հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ներկայացնում է երիտասարդների շահերն ու իրավունքները եւ ազգային ու միջազգային մակարդակներում հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցչական մարմին, որը պետության հետ՝ ի դեմս լիազորված մարմնի, պետք է ունենա կնքված ~~որի հետ պետությունը ի դեմս լիազոր մարմնի կնքում է~~ սոցիալական գործընկերության մասին համագործակցության հուշագիր: Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի առնվազն 2/3-ը պետք է բաղկացած լինի երիտասարդական կազմակերպություններից, իսկ կառավարման բարձրագույն մարմնի անդամների առնվազն 2/3-ը պետք է լինեն երիտասարդներ: Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի անդամակցության չափանիշները եւ կարգը սահմանվելու են միացյալ մարմնի կանոնադրությամբ: Այն գործելու է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից անկախ եւ կնքված հուշագրի հիման վրա~~:~~,

**10) երիտասարդական նախաձեռնող խմբեր՝** իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող երիտասարդների ինքնակազմակերպման արդյունքում ձևավորված խումբ, որի գործունեությունը բխում է պետական երիտասարդական ~~քաղաքականության առաջնահերթություններից?~~քաղաքականությունից,

**11) Երիտասարդական կենտրոն՝** ~~առանձին իրավակազմակերպական ձեւ~~ պետության կամ համայնքի կամ ոչ պետական կազմակերպությունների կողմից կամ նրանց միջև երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող~~, ինչպես նաեւ կամ համայնքի կամ կազմակերպության հաշվեկշռում գտնվող~~ կամ իրավաբանական անձի կառուցվածքային ստորաբաժանում ~~ֆիզիկական տարածք՝ միջավայր, որտեղ~~ որը իրականացնվում է երիտասարդական աշխատանք, կազմակերպվում է ինտելեկտուալ ժամանց և իրականացնվում էեն պետական երիտասարդական քաղաքականությունից բխող ծրագրեր և միջոցառումներ~~? Երիտասարդական կենտրոնը կարող է ստեղծվել պետության կամ համայնքի կամ քաղաքացիական հասարակության կառույցների կողմից կամ նրանց միջեւ երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ,~~

**12) Երիտասարդական ուսումնասիրություն՝** երիտասարդության հարցերին առնչվող հետազոտական գործողություն, որն ուղղված է երիտասարդների վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրմանը, նրանց ակնկալիքների, ձգտումների, երիտասարդների կյանքում առկա և պոտենցիալ մարտահրավերների և հնարավորությունների, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության և երիտասարդական աշխատանքի վրա ազդեցություն ունեցող երիտասարդների սոցիալական, հոգեբանական, տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ազդեցությունների չափմանը,

**13) Համայնքի երիտասարդական քաղաքականություն՝** պետական երիտասարդական քաղաքականությունից բխող ~~համայնքի երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների եւ նախասիրությունների բավարարմանը, համայնքում երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը եւ որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը ուղղված~~համայնքային առանձնահատկությունները արտացոլող պլանավորված միջոցառումների համակարգ:

**Հոդված ~~2.~~3 Երիտասարդական քաղաքականության սկզբունքները**

1. Երիտասարդական քաղաքականության սկզբունքներն են՝

**1) երիտասարդության՝** որպես երկրի զարգացման շարժիչ ուժի դիտարկում՝ ապահովել տարբեր ոլորտային ծրագրերում երիտասարդության շեշտադրումը,

**2) մասնակցություն՝** հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների, երիտասարդական նախաձեռնող խմբերի ներգրավվածության կարևորում,

**3) փաստահեն երիտասարդական քաղաքականություն՝** պետական երիտասարդական քաղաքականության և ծրագրերի մշակումն իրականացնել հուսալի և այժմէական ~~հետազոտությունների~~ուսումնասիրությունների, մշտադիտարկումների, գնահատումների և այլ փաստերի հիման վրա,

**4) համաժամանակեցված երիտասարդական քաղաքականություն՝** մշակել պետական երիտասարդական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության զարգացման հեռանկարային ռազմավարությունների հիման վրա՝ ուղղված դրանց իրականացմանը կամ իրականացման նախադրյալների ստեղծմանը: Ուղղորդվել հստակ սահմանված

ռազմավարական նպատակներով և յուրաքանչյուր գործողություն կառուցել ձեռքբերված նվաճումների և արդյունքների հիման վրա,

**5) չափելիություն՝** սահմանել պետական երիտասարդական քաղաքականության իրականացման արդյունքները և այդ արդյունքների չափման մեխանիզմները,

**6) ներառականություն՝** յուրաքանչյուր երիտասարդի համար՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովվում, երիտասարդության ոլորտում իրականացվող ծրագրերին առավելագույն մասնակցության ապահովվմանը ուղղված քայլերի իրականացում:

## ԳԼՈՒԽ 2

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հոդված ~~3~~4. Երիտասարդական քաղաքականության սուբյեկտները**

1. Երիտասարդական քաղաքականության սուբյեկտներ են՝ երիտասարդական քաղաքականությունն իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, երիտասարդական կազմակերպությունները, ~~Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմինը,~~ երիտասարդական կենտրոնները, երիտասարդական աշխատողները, երիտասարդական նախաձեռնող խմբերը և երիտասարդները:

**~~Հոդված 4.~~Հոդված 5. Երիտասարդական քաղաքականության բնագավառում ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության իրավասությունները**

1. ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության իրավասություններն են՝

1) հաստատել պետական երիտասարդական քաղաքականության զարգացմանը նպաստող ռազմավարական ~~փաստաթղթերը~~փաստաթուղթը, որն ուղղված է ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ երիտասարդի ձևավորմանը՝ ընդլայնելու իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու երիտասարդի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը,

2) հաստատել երիտասարդներին և երիտասարդ ընտանիքներին աջակցման ծրագրերը:

**Հոդված 6. ~~Հոդված 5.~~ Երիտասարդական քաղաքականության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները**

1. Պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

1) համակարգել պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում իրականացվող միջոցառումները,

2) հաստատել երիտասարդական կենտրոնների գործունեության ~~կարգը~~կարգն ու մեթոդաբանությունը,

3) հաստատել պետության և համայնքի կողմից հիմնված երիտասարդական կենտրոնների օրինակելի կանոնադրությունը,

4)~~ մշակել եւ~~ հաստատել երիտասարդական նախաձեռնող խմբերի աջակցման մեթոդաբանությունը,

~~5~~5) հաստատել համայնքի երիտասարդական քաղաքականության մշակման մեթոդաբանությունը,

6) հաստատել երիտասարդական աշխատողի վերապատրաստման կարգը, որակավորման չափանիշները և երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությունը,
7) հաստատել միացյալ մարմնի ընտրության կարգը և պայմանները,
8)~~5~~ իրականացնել երիտասարդների կարիքների վերաբերյալ ամենամյա ~~հետազոտություն~~ երիտասարդական ուսումնասիրություն՝ ապահովելով ~~ըստ սեռի~~ տարանջատված տվյալների առկայությունը և հրապարակել տարեկան զեկույց լիազորված մարմնի պաշտոնական կայքէջում,
~~6~~9)~~6~~ իրականացնել պետական ծրագրերում երիտասարդության բաղադրիչի վերաբերյալ փորձագիտական վերլուծություն,
~~7~~10) ապահովել պետական երիտասարդական քաղաքականության մշտադիտարկումը,
11) ապահովել միջգերատեսչական համագործակցությունը, ինչպես նաև այլ ոլորտային ռազմավարություններում երիտասարդների կարիքների և ակնկալիքների ներառումը~~,~~:
~~8) հաստատել համայնքի երիտասարդական քաղաքականության մշակման մեթոդաբանությունը,~~
~~9) հաստատել երիտասարդական աշխատողի վերապատրաստման կարգը եւ որակավորման չափանիշները,~~
~~10) ապահովել պետական երիտասարդական քաղաքականության մշտադիտարկումը:~~

**Հոդված ~~6~~7. Երիտասարդական քաղաքականության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները**

1. Տեղական ինքնակառավարման մարմնի իրավասություններն են՝
1) համայնքի ղեկավարը, ելնելով համայնքի երիտասարդների կարիքներից, ակնկալիքներից, ձգտումներից, երիտասարդների կյանքում առկա և պոտենցիալ մարտահրավերներից և հնարավորություններից, ինչպես նաև պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարական ծրագրով սահմանված առաջնահերթություններից, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մեջ ներառում է երիտասարդական ծրագրեր, մշակում է և ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի երիտասարդական քաղաքականությունը,
2) համայնքի ղեկավարը ~~համայնքում~~համայնքի երիտասարդական քաղաքականության մշակումն ու իրականացումն ապահովելու նպատակով համայնքի աշխատակազմի աշխատողներից առնվազն մեկի գործառույթներում սահմանում է երիտասարդական աշխատողի գործառույթները կամ համայնքի ղեկավարի հայեցողությամբ առանձնացնում երիտասարդական աշխատողի առնվազն մեկ հաստիք,
3) համայնքի ղեկավարը համայնքում հիմնադրում է երիտասարդական կենտրոն կամ աջակցում է համայնքում երիտասարդական կենտրոնի հիմնադրմանը և գործունեությանը,
4) օրինակելի կանոնադրության հիման վրա ավագանու որոշմամբ համայնքի ղեկավարը հաստատում է համայնքի կողմից ստեղծվող երիտասարդական կենտրոնի կանոնադրությունը,
5) համայնքի ղեկավարը հաստատում է համայնքի կողմից ստեղծվող երիտասարդական կենտրոնի գործունեության տարեկան կամ բազմամյա ծրագիրը,
6) համայնքի համագործակցությամբ ստեղծվող երիտասարդական կենտրոնների դեպքում համայնքի և գործընկեր կառույցների միջև կնքվող համագործակցությունը սահմանող իրավապայմանագրային փաստաթղթով սահմանվում են երիտասարդական կենտրոնի գործառույթները՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությամբ սահմանված գործառութային նպատակները,
7) համայնքի ղեկավարը աջակցում է համայնքում կազմակերպվող երիտասարդական միջոցառումների իրականացմանը,

8) համայնքի ղեկավարը համայնքի երիտասարդներին և երիտասարդական քաղաքականության մյուս սուբյեկտներին մասնակից է դարձնում համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և երիտասարդներին առնչվող այլ ռազմավարական փաստաթղթերի մշակմանը, իրականացմանը, ինչպես նաև մշտադիտարկմանը և գնահատմանը,
9) համայնքի ղեկավարը մասնակցություն է ունենում պետական երիտասարդական քաղաքականության իրականացման աշխատանքներին:
2. Երևան քաղաքում ստեղծվող համայնքային երիտասարդական ~~կենտրոնը~~կենտրոնը մասնաճյուղեր է ունենում բոլոր վարչական շրջաններում:

~~***Հոդված 7. Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմինը***~~
~~1. Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի գործունեությունը կարգավորվում է գործող անդամ կազմակերպությունների միջև կնքված հուշագրի հիման վրա, որում ամրագրված է անդամ կազմակերպությունների պարտականությունները եւ իրավունքները, կառավարման կոլեգիալության եւ մասնակցայնության սկզբունքով:~~
~~2. Կազմակերպության անդամ են հանդիսանում կամ կարող են անդամակցել երիտասարդական կազմակերպությունները եւ երիտասարդական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպությունները, որոնց անդամակցության կարգն ու պահանջները սահմանվում են կանոնադրությամբ:~~
~~3. Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի կառուցվածքը, գործառույթները եւ կառավարման առանձնահատկությունները կարգավորվում են կանոնադրությամբ:~~
~~4. Պետության կողմից երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմին կարող է ճանաչվել միայն մեկ կազմակերպություն, որը միավորում է առավել մեծ թվով երիտասարդական կազմակերպություններ, որոնց գործունեությունը տարածվում է ՀՀ վարչատարածքային միավորների առնվազն կեսում եւ որի հետ լիազոր մարմինը կնքում է համագործակցության հուշագիր, որը կսահմանի պետական երիտասարդական քաղաքականության իրականացման մեջ պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության շրջանակը:~~

**Հոդված 8. Երիտասարդները, երիտասարդական նախաձեռնող խմբերը, երիտասարդական աշխատողները, Երիտասարդական կազմակերպությունները և երիտասարդական կենտրոնները**

1. Երիտասարդները իրավունք ունեն օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցել~~՝~~
~~պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում նախատեսված ծրագրերին եւ միջոցառումներին՝~~
~~2. Երիտասարդները կարող են ստեղծել երիտասարդական կազմակերպություններ եւ երիտասարդական կենտրոններ, մասնակցել դրանց աշխատանքներին:~~
~~3. Երիտասարդական կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ երիտասարդական կազմակերպությունների միություն է:~~
~~4. Երիտասարդական կազմակերպությունը իր անվանման մեջ պետք է պարունակի «երիտասարդական» բառը՝~~
~~5. Երիտասարդական կազմակերպություն լինելու համար կազմակերպության կանոնադրությամբ պետք է նախատեսվի երիտասարդական աշխատանքի եւ երիտասարդական ծրագրերի իրականացումը, իսկ անդամների առնվազն 2/3-ը պետք է լինեն երիտասարդներ կամ երիտասարդական կազմակերպություններ:~~
~~6. Երիտասարդական կենտրոնը կարող է ստեղծվել~~ պետության ~~կամ~~ և համայնքի ~~կամ քաղաքացիական հասարակության կառույցների կողմից կամ նրանց միջեւ երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ:~~
~~7. Համագործակցությամբ ստեղծված կենտրոնների պարագայում հիմնադիրների միջեւ կնքվում է համագործակցության հուշագիր որում ամրագրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից երիտասարդական կենտրոնների գործունեության կարգով նախատեսված դրույթները:~~
~~8. Երիտասարդական կենտրոնում իրականացվում է երիտասարդական աշխատանք, ինչպես նաեւ պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում եւ հիմնադիրների միջեւ կնքված համագործակցության հուշագրով նախատեսված ծրագրեր եւ միջոցառումներ:~~

~~9. Երիտասարդական աշխատողներն իրականացնում են՝ աշխատանք~~ կողմից երիտասարդներին ուղղված քաղաքականությունների մշակմանը, դրա շրջանակներում նախատեսված ծրագրերին և միջոցառումներին, որպես անհատ հանդես գալ սեփական նախաձեռնություններով և մասնակցել ու առաջարկություններ ներկայացնել պետական կամ համայնքային մակարդակներում կայացվող որոշումների շրջանակներում:

2. Երիտասարդական նախաձեռնող խմբերը կարող են հանդես գալ նախաձեռնություններով, մշակել և իրականացնել երիտասարդության շրջանում տարբեր ծրագրեր և միջոցառումներ, աջակցել երիտասարդական աշխատողներին համայնքներում իրականացվող երիտասարդական աշխատանքին:

3. Երիտասարդական աշխատողն իրականացնում է երիտասարդների կարիքների ~~եւ~~և ակնկալիքների ~~բացահայտմանը,~~ վերհանմանը, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը և որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը միտված աշխատանք:

4.Երիտասարդական աշխատանքի տեսակները, աշխատանքի առանձնահատկություններով և երիտասարդների տարիքային խմբով պայմանավորված, սահմանվում են երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությանը:

5. ~~հոգեւոր եւ անձնային զարգացման խթանմանը, հանրային կյանքին ներառմանը, երիտասարդական ծրագրերի մշակմանը, իրականացմանը եւ գնահատմանը, ինչպես նաեւ մասնակցում են~~Երիտասարդական կազմակերպությունը կարող է մասնակցել պետության կողմից երիտասարդությանն ուղղված ոլորտային քաղաքականությունների մշակման աշխատանքներին:

6. Երիտասարդական կենտրոնը գործում է երիտասարդական աշխատանքի սկզբունքներով և մեթոդաբանությամբ, ունի համապատասխան աշխատակազմ, նյութատեխնիկական միջոցներ և ֆիզիկական տարածք, իրականացնում է երիտասարդական աշխատանք և երիտասարդական ծրագրեր, կարող է մասնակցել համայնքի երիտասարդական քաղաքականության ~~մշակմանը~~մշակմանն ու իրականացման աշխատանքներին:

## ԳԼՈՒԽ 3

## ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Հոդված 9. Պետական երիտասարդական քաղաքականության մշակումը և իրականացումը

1. Պետական երիտասարդական քաղաքականությունը մշակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության, երիտասարդական քաղաքականության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական~~ության~~ կենտրոնների եւ երիտասարդների հետ համագործակցության եւ մասնակցության սկզբունքների պահպանմամբ:

2. Պետական երիտասարդական քաղաքականությունը մշակում և իրականացնում է երիտասարդական քաղաքականության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմինը:

**Հոդված 10. Պետական երիտասարդական քաղաքականության գնահատումը**

1. Պետական երիտասարդական քաղաքականության ազդեցությունը գնահատելու համար իրականացվում են ~~տարբեր~~ երիտասարդական ուսումնասիրություններ և վերլուծություններ:

2. Իրականացված երիտասարդական ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա վերանայվում են պետական երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունները և թիրախային ներդրումները:

**Հոդված 11. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

3. Սույն օրենքի ~~6~~7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերը ուժի մեջ են մտնում համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման պահին:

4. Սույն օրենքի ~~6~~7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերը տեղական ինքնակառավարման մարմինների վրա տարածվում են համայնքում համայնքային երիտասարդական կենտրոնի ստեղծման պահից:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**
**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-962-12.11.2024-ԳԿ-011/1)**
**ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1.** | Կառավարություն | **նոր լրացվող 1-ին հոդված** | «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանված չէ վերջինիս կարգավորման առարկան, ինչի հետևանքով հնարավոր չէ պատկերացում կազմել Նախագծով կարգավորվող հարաբերությունների և հարցերի առանցքային ոլորտների մասին: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքով հարաբերությունների շրջանակի սահմանումը նպաստում է այդ ակտից օգտվելու դյուրինությանը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն, առ այն, որ «Նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից», առաջարկում ենք Նախագծով հստակ նախատեսել համապատասխան օրենքի կարգավորման առարկան՝ ապահովելով համապատասխան իրավական ակտի որոշակիության աստիճանը:<br>Հաշվի առնելով վերոգրյալը Նախագիծը խմբագրվել է, լրացվել է նոր 1-ին հոդված՝ սահմանվելով օրենքի կարգավորման առարկան:<br>«**Հոդված 1. Երիտասարդական քաղաքականության մասին օրենքի կարգավորման առարկան** | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2. Սույն օրենքը կարգավորում է երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության իրականացման գործընթացում ներգրավված սուբյեկտների և պետական կառավարման մարմինների միջև ծագող իրավահարաբերություններ:»:<br>Ըստ այդմ հոդվածների համարակալումը վերանայվել է: | | |
| **2.** | Կառավարություն | **Հոդված 1-ին (Լրամշակված 2)** | 1. 2-րդ մասում առաջարկում ենք՝<br>ա. հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը,<br>բ. «երիտասարդների» բառից հետո լրացնել «կարիքների», իսկ «բնույթի» բառից հետո լրացնել «այլ» բառը:<br>փոփոխության առաջարկը պայմանավորված է «պետական երիտասարդական քաղաքականություն» հասկացությունը ավելի ընդգրկու սահմանելու նպատակով: Պետական երիտասարդական քաղաքականությունը պետք է միտված լինի, ոչ միայն երիտասարդների կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, այլ նաև նրանց կարիքի բացահայտմանը: Այսինքն պետք է նախ բացահայտել երիտասարդների կարիքը հետո կարողությունները, ու նոր զարգացնել դրանք և բավարարել երիտասարդների բոլոր նախասիրությունները (կրթական, մշակութային և սոցիալական բնույթի այլ նախասիրությունները): «այլ» բառի ավելացումը ավելի ընդգրկուն է դարձնում սոցիալական նախասիրությունները՝ ներառելով նաև երիտասարդների օրինակ՝ առողջ ապրելակերպը կամ սպորտային հետաքրքրությունները:<br>գ. Պարբերության վերջին նախադասությունը հանել:<br>Պարբերության վերջին նախադասությունը հասկացության սահմանումից հանվել է, հասկացությունը ավելի հակիրճ և հստակ ձևակերպելու նպատակով, սակայն միտքը տեղափոխվել է նոր լրամշակված Հոդված 5-ի 1-ին կետ՝ պետական | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | երիտասարդական քաղաքականության զարգացմանը նպաստող ռազմավարական փաստաթղթի ուղղվածությունը ընդգծելու նպատակով:<br>2. 3-րդ մասին վերջին նախադասությունը առաջարկում ենք հանել:<br>3-րդ մասի վերջին նախադասությունը հասկացության սահմանումից հանվել է, հասկացությունը ավելի հակիրճ և հստակ ձևակերպելու նպատակով, սակայն միտքը տեղափոխվել է Հոդված 8-ի 3-րդ կետ՝ երիտասարդական աշխատողի լիազորությունները սահմանելու նպատակով:<br>Ձևակերպվելով հետևյալ կերպ՝<br>«3. Երիտասարդական աշխատողն իրականացնում է երիտասարդների կարիքների և ակնկալիքների վերհանմանը, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը և որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը միտված աշխատանք:»<br>3. 4-րդ մասում՝ «Ծառայությունների մատուցմամբ» բառերից հետո լրացնել «կամ աշխատանքային պայմանագրային հարաբերություններով» բառերը:<br>Առաջարկը պայմանավորված է երիտասարդական աշխատողի հետ իրավահարաբերությունները կարգավորող պայմանագրային ձևերը ավելի ընդգրկուն և ամբողջական դարձնելու նպատակով:<br>4. 5-րդ մասում՝ «քաղաքականությունից բխող» բառերից հետո առաջարկում ենք հանել «երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հետաքրքրությունների եւ նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը եւ որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը ուղղված» բառերը, որի արդյունքում դրույթը խմբագրվել է հետևյալ կերպ՝<br>«5) երիտասարդական ծրագիր՝ պետական երիտասարդական քաղաքականությունից բխող պլանավորված միջոցառում կամ միջոցառումների համակարգ,»<br>Առաջարկը պայմանավորված է Նախագծում կրկնություններից խուսափելու նպատակով:<br>Օրինակ՝ եթե «պետական երիտասարդական քաղաքականություն» հասկացությունը սահմանել ենք, որ միտված է երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների եւ նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը եւ որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը, ապա «երիտասարդական ծրագրեր» սահմանելիս կարիք չկա կրկնել նույն միտքը:<br>5. «6) երիտասարդական միջոցառում՝ պետական երիտասարդական քաղաքականությունից բխող երիտասարդական ծրագրերի իրականացմանն ուղղված պլանավորված գործողություն,» բառերը առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝<br>«6) **երիտասարդական միջոցառում՝** երիտասարդական ծրագրերի իրականացմանն ուղղված պլանավորված գործողություն, որն իրականացվում է | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | երիտասարդների համար, երիտասարդների կողմից կամ նրանց մասնակցությամբ,»<br>Փոփոխության առաջարկը պայմանավորված է հասկացությունը ավելի ամբողջական և ընդգրկուն դարձնելու նպատակով:<br>6. 8-րդ մասում՝ «կարգավիճակ ունեցող» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «ոչ առևտրային» բառերը, իսկ «երիտասարդներ են» բառերից հետո լրացնել «իսկ անդամություն չունեցող կազմակերպությունների դեպքում՝ կառավարման մարմնի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են,» բառերը,<br>Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպությունները չեն կարող համարվել երիտասարդական կազմակերպությունները, քանր որ առևտրային կազմակերպությունների գործունեության նպատակը տարբերվում է պետական երիտասարդական քաղաքականության նպատակից, իսկ ոչ առևտրային կազմակերպությունների թվում գտնվող օրինակ հիմնադրամները չունեն անդամներ, այդ նպատակով անհրաժեշտություն էր առաջացել հստակեցնել անդամություն չունեցող կազմակերպությունների դեպքում երիտասարդական համարվելու պայմանները:<br>7. 9-րդ մասում՝ «ի դեմս լիազոր մարմնի կնքում է» բառերի փոխարեն լրացնել «որը պետության հետ՝ ի դեմս լիազորված մարմնի, պետք է ունենա կնքված» բառերը,<br>Առաջարկը պայմանավորված է հստակություն մտցնելու նպատակով: Նախագծի նոր փոփոխված Հոդված 5-ում սահմանվել են երիտասարդական քաղաքականության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները, հետևաբար հասկացության սահմանման մեջ ևս առաջարկում ենք օգտագործել «լիազորված մարմին» եզրույթը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Միաժամանակ հաշվի առնելով, որ Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմինը չի ստեղծվում պետության կողմից, այլ քաղաքացիական հասարակության կառույցները ինքնաբուխ համախմբվում են և պետք է գործեն պահելով իրենց անկախությունը, և որ պետությունը ընդամենը մեկ կառույց կարող է ճանաչել որպես միացյալ մարմին՝ կնքելով համապատասխան հուշագիր, ուստի ճիշտ կլինի օգտագործել «որը պետության հետ՝ ի դեմս լիազորված մարմնի, պետք է ունենա կնքված» եզրույթը՝ խուսափելով հետագա տարընկալումներից:<br>8. 10-րդ մասում «քաղաքականության առաջնահերթություններից» բառերի փոխարեն լրացնել «քաղաքականությունից,» բառը, «քաղաքականության առաջնահերթություններ» եզրույթը առաջարկում ենք փոխարինել «քաղաքականություն», քանի, որ պետական երիտասարդական քաղաքականութամբ սահմանվում են պետության կողմից երիտասարդության ոլորտում վարվող քաղաքականության առաջնահերթությունները, ուստի «առաջնահերթություններ» բառի կիրառումը ավելորդ է:<br>9. 11-րդ կետը առաջարկում ենք վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝<br>«11) Երիտասարդական կենտրոն՝ պետության կամ համայնքի կամ ոչ պետական կազմակերպությունների կողմից կամ նրանց միջև երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ իրավաբանական անձի կառուցվածքային ստորաբաժանում որը իրականացնում է երիտասարդական աշխատանք, կազմակերպում է ինտելեկտուալ ժամանց և իրականացնում է պետական երիտասարդական քաղաքականությունից բխող ծրագրեր և միջոցառումներ:» | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Առաջարկը պայմանավորված է հասկացությունը ավելի հստակ և հասկանալի ձևակերպելու նպատակով:<br>10. 13-րդ կետում՝ «բխող» բառից հետո ավելացվել է «համայնքային առանձնահատկությունները արտացոլող» բառերը և հանվել է «համայնքի երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների եւ նախասիրությունների բավարարմանը, համայնքում երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը եւ որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը ուղղված» բառերը:<br>Խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝<br>«**13) Համայնքի երիտասարդական քաղաքականություն՝** պետական երիտասարդական քաղաքականությունից բխող համայնքային առանձնահատկությունները արտացոլող պլանավորված միջոցառումների համակարգ:»<br>Առաջարկը պայմանավորված է հասկացությունը ավելի հստակ և հասկանալի ձևակերպելու նպատակով: | | |
| **3.** | Կառավարություն | **Հոդված 2 (Լրամշակված 3)** | 3-րդ մասում «հետազոտությունների» բառի փոխարեն առաջարկում ենք լրացնել «ուսումնասիրությունների» բառը<br>Փոփոխության առաջարկը պայմանավորված է հասկացությունը ավելի ամբողջական և ընդգրկուն դարձնելու նպատակով: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| **4.** | Կառավարություն | **Հոդված 3 (Լրամշակված 4)** | Առաջարկում ենք հանել «Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմինը» բառերը, փոխարենը<br>«աշխատողները» բառերից հետո լրացնել «երիտասարդական նախաձեռնող խմբեր» բառերը:<br>Առաջարկում ենք երիտասարդական | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | քաղաքականության սուբյեկտներից հանել Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմինը, հաշվի առնելով, որ Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմինը չի ստեղծվում պետության կողմից, ուստի չի կարող հանդիսանալ սուբյեկտ, իսկ երիտասարդական նախաձեռնող խմբերը ավելացնել սուբյեկտների կազմում, հաշվի առնելով, որ պետական երիտասարդական քաղաքականությունն ուղղված է երիտասարդների ակտիվացմանը և նրանց մասնակցության մակարդակի բարձրացմանը: Նախաձեռնող խմբերի ձևավորումը դա առաջին քայլերն են երիտասարդներին ավելի ակտիվ, հայրենասեր և համայնքի կյանքում հավելյալ արժեք ստեղծող քաղաքացի կերտելու գործում: | | |
| **5.** | Կառավարություն | **Հոդված 4 (Լրամշակված 5)** | 1. Վերնագրից և 1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետության բառերը»<br>2. 1-ին մասում՝ «փաստաթղթերը» բառի փոխարեն լրացնել «փաստաթուղթը, որն ուղղված է ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ երիտասարդի ձևավորմանը՝ ընդլայնելու իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու երիտասարդի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը,» բառերը<br>Փոփոխության առաջարկը պայմանավորված է պետական երիտասարդական քաղաքականության զարգացմանը նպաստող ռազմավարական փաստաթղթի ուղղվածությունը ընդգծելու նպատակով: | **Ընդունվել է**<br><br>**Ընդունվել է** | **Ընդունվել է**<br><br>**Ընդունվել է** |
| **6.** | Կառավարություն | **Հոդված 5 (Լրամշակված 6)** | Նախագծով պետական կառավարման լիազորված մարմնին է պատվիրակած երիտասարդների կարիքների վերաբերյալ ամենամյա հետազոտության իրականացումը:<br>Հոդվածը խմբագրվել է և նույնականացվել են նույնաբովանդակ բառերը | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «1. Պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝<br>1) համակարգել պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում իրականացվող միջոցառումները,<br>2) հաստատել երիտասարդական կենտրոնների գործունեության կարգն ու մեթոդաբանությունը,<br>2-րդ մասում «գործունեության կարգը,» բառերը փոխարինել «գործունեության կարգն ու մեթոդաբանությունը,» բառերով<br>Ավելացումը պայմանավորված է լիազորված մարմնի երիտասարդական կենտրոնների գործունեության մեթոդաբանությունը հաստատելու լիազորող նորմ ստեղծելու անհրաժեշտությամբ:<br>3) հաստատել պետության և համայնքի կողմից հիմնված երիտասարդական կենտրոնների օրինակելի կանոնադրությունը,<br>4) հաստատել երիտասարդական նախաձեռնող խմբերի աջակցման մեթոդաբանությունը,<br>4-րդ մասում «մշակել եւ» բառերը հանել<br>Առաջարկը պայմանավորված է հոդվածի նույնաբովանդակությունը պահելու միտումով:<br>8-րդ և 9-րդ մասերը դարձել են 5-րդ և 6-րդ մասեր:<br>Առաջարկը պայմանավորված է լիազորված մարմնի լիազորությունների ճիշտ հաջորդականությունը պահելու նպատակով, այսինքն սկզբից ձևակերպվում են լիազորված մարմնի կողմից հաստատվող փաստաթղթերը<br>5) հաստատել համայնքի երիտասարդական քաղաքականության մշակման մեթոդաբանությունը,<br>6) հաստատել երիտասարդական աշխատողի վերապատրաստման կարգը, որակավորման չափանիշները և երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությունը,<br>7) հաստատել միացյալ մարմնի ընտրության կարգը և | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պայմանները,<br>8-րդ մասը սահմանվել է հետևյալ կերպ՝ «8) իրականացնել երիտասարդների կարիքների վերաբերյալ ամենամյա երիտասարդական ուսումնասիրություն՝ ապահովելով տարանջատված տվյալների առկայությունը և հրապարակել տարեկան զեկույց լիազորված մարմնի պաշտոնական կայքէջում,»<br>Փոփոխությունը պայմանավորված է տարբեր հոդվածներում կիրառված «ուսումնասիրություն», «հետազոտություն» եզրույթները նույնականացնելու մտադրությամբ:<br>9) իրականացնել պետական ծրագրերում երիտասարդության բաղադրիչի վերաբերյալ փորձագիտական վերլուծություն,<br>10) ապահովել պետական երիտասարդական քաղաքականության մշտադիտարկումը,<br>11) ապահովել միջգերատեսչական համագործակցությունը, ինչպես նաև այլ ոլորտային ռազմավարություններում երիտասարդների կարիքների և ակնկալիքների ներառումը:» | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| **7.** | Կառավարություն | **Հոդված 6 (Լրամշակված 7)** | 2-րդ մասը ձևակերպել հետևյալ բովանդակությամբ՝<br>«2) համայնքի ղեկավարը համայնքի երիտասարդական քաղաքականության մշակումն ու իրականացումն ապահովելու նպատակով համայնքի աշխատակազմի աշխատողներից առնվազն մեկի գործառույթներում սահմանում է երիտասարդական աշխատողի գործառույթները կամ համայնքի ղեկավարի հայեցողությամբ առանձնացնում երիտասարդական աշխատողի առնվազն մեկ հաստիք,»<br><br><u>Փոփոխությունը կրում է խմբագրական բնույթ, մասնավորապես անհասկանալի էր «համայնքում երիտասարդական քաղաքականության մշակում» ձևակերպումը, անհրաժեշտ է ձևակերպել «համայնքի երիտասարդական քաղաքականության», ինչպես նաև</u> | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անհասկանալի էր «համայնքի հայեցողությամբ» արտահայտությունը և առաջարկվել է ձևակերպել «համայնքի ղեկավարի հայեցողությամբ», նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 180-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է:<br>Նույն դիտարկումը վերաբերում է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 46-րդ հոդվածի նոր լրացվող 3-րդ մասի երկրորդ նախադասությանը:<br>Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 3-րդ և 4-րդ կետերով, որոնցից 4-րդ կետով սահմանվում է, որ վարչական շրջանի ղեկավարը հաստիքացուցակում երիտասարդական աշխատողի առնվազն մեկ հաստիք սահմանելու վերաբերյալ առաջարկ է ներկայացնում քաղաքապետին:<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նաև միմյանց համապատասխանեցնել Նախագիծ 6-րդ( լրամշակված 7-րդ հոդվածի) 1-ին մասի 2-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի նույնաբովանդակ դրույթները՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը: | | |
| **8.** | Կառավարություն | **1-ին ընթերցմամբ ընդունված Հոդված 7** | Հաշվի առնելով, որ Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմին ճանաչելու գործընթացի առավել մանրամասն կարգավորումը ենթադրում է ենթաօրենսդրական ակտի ընդունում, նախագծի 6-րդ հոդվածում սահմանվել է լիազորող նորմ համապատասխան ենթաօրենսդրական ակտ ընդունելու համար,<br>Իսկ 2-րդ հոդվածի 1-ի մասին 9-րդ կետում երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի հասկացության մեջ սահմանվել է, որ լիազորված մարմինը «կարող է կնքել հուշագիր» կարգավորումը,<br>Հաշվի առնելով, որ Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմինը չի ստեղծվում պետության կողմից, ուստի չի կարող հանդիսանալ սուբյեկտ, հետևաբար և բացակայում է առանձին հոդվածով երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի վերաբերյալ իրավակարգավորումներ սահմանելու պահանջը:<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ 1-ին ընթերցմամբ ընդունված նախագծի<br>7-րդ հոդվածը առաջարկում ենք հանել: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| **9.** | Կառավարություն | **Հոդված 8** | 1. Նախագծի 8-րդ հոդվածի վերնագրված «Երիտասարդները, երիտասարդական աշխատողները, Երիտասարդական կազմակերպությունները և երիտասարդական կենտրոնները» բառերը փոխարինել՝ «**Երիտասարդները, երիտասարդական նախաձեռնող խմբերը, երիտասարդական աշխատողները, Երիտասարդական կազմակերպությունները և երիտասարդական կենտրոնները** » բովանդակությամբ, հոդվածը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝<br>«**Հոդված 8. Երիտասարդները, երիտասարդական նախաձեռնող խմբերը, երիտասարդական** | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **աշխատողները, Երիտասարդական կազմակերպությունները և երիտասարդական կենտրոնները**<br>1. Երիտասարդները իրավունք ունեն օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցել պետության և համայնքի կողմից երիտասարդներին ուղղված քաղաքականությունների մշակմանը, դրա շրջանակներում նախատեսված ծրագրերին և միջոցառումներին, որպես անհատ հանդես գալ սեփական նախաձեռնություններով և մասնակցել ու առաջարկություններ ներկայացնել պետական կամ համայանքային մակարդակներում կայացվող որոշումների շրջանակներում:<br>2. Երիտասարդական նախաձեռնող խմբերը կարող են հանդես գալ նախաձեռնություններով, մշակել և իրականացնել երիտասարդության շրջանում տարբեր ծրագրեր և միջոցառումներ, աջակցել երիտասարդական աշխատողներին համայնքներում իրականացվող երիտասարդական աշխատանքին:<br>3. Երիտասարդական աշխատողն իրականացնում է երիտասարդների կարիքների և ակնկալիքների վերհանմանը, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը և որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը միտված աշխատանք:<br>4.Երիտասարդական աշխատանքի տեսակները, աշխատանքի առանձնահատկություններով և երիտասարդների տարիքային խմբով պայմանավորված, սահմանվում են երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությանբ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 5.Երիտասարդական կազմակերպությունը կարող է մասնակցել պետության կողմից երիտասարդությանն ուղղված ոլորտային քաղաքականությունների մշակման աշխատանքներին:<br>6. Երիտասարդական կենտրոնը գործում է երիտասարդական աշխատանքի սկզբունքներով և մեթոդաբանությամբ, ունի համապատասխան աշխատակազմ, նյութատեխնիկական միջոցներ և ֆիզիկական տարածք, իրականացնում է երիտասարդական աշխատանք և երիտասարդական ծրագրեր, կարող է մասնակցել համայնքի երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացման աշխատանքներին:»<br>Փոփոխությունը պայմանավորված է նրանով, նախագծում կարգավորումները ունեին ընդհանրական բնույթ, հետևաբար անհրաժեշտություն էր առաջացել հստակեցնել պետական երիտասարդական քաղաքականության սուբյեկտների վերաբերյալ իրավակարգավորումները՝ բացառելով կրկնությունները: | | |
| 10. | Կառավարություն | **Հոդված 9** | 9-րդ հոդվածի 1-ին մասում «***երիտասարդության*** *կենտրոնների*» բառերն անհրաժեշտ է փոխարինել «***երիտասարդական*** *կենտրոնների*» բառերով՝ համապատասխանեցնելով 2-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի բովանդակությանը: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| 11. | Կառավարություն | **Հոդված 10** | «իրականացնում են» բառերից հետո հանել «տարբեր» բառերը՝<br>«տարբեր» բառի կիրառելիությունը հետագայում օրենքի կիրառման տեսանկյունից կարող է միանշանակ չհասկացվել, ուստի առաջարկում ենք հանել «տարբեր» բառը | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12. | Կառավարություն | **Հոդված 11** | ***1. 3-րդ և 4-րդ մասերում «6-րդ» բառերի փոխարեն լրացնել «7-րդ» բառերը՝*** քանի որ կարգավորումները վերաբերում են 7-րդ հոդվածին,<br>***2.*** 3-րդ մասում՝ «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ իրավական» բառերը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը 3-րդ մասը | **Ընդունվել է**<br>**Ընդունվել է** | **Ընդունվել է**<br>**Ընդունվել է** |
| 13. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | | Օրենքի վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Երիտասարդական քաղաքականության հիմնադրույթներ» հաշվի առնելով նախագծի կարգավորման առարկայի՝ քաղաքականության բացակայությունը և նախագծի հրապարակախոսական բնույթը: | **Մասամբ է ընդունվել** Նախագծի վերնագիրը չի փոխվել, սակայն Նախագիծը խմբագրվել է և Հոդված 1-ով սահմանվել է օրենքի կարգավորման առարկան: | **Ընդունվել է մասամբ** |
| 14. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | | Վերաշարադրել նախագծի նախաբանը/պրեամբուլան/ և սահմանել նախագծով հիմնավորվող նպատակ, քանի որ պետական քաղաքականության, ռազմավարության կամ հայեցակարգի չգոյության պայմաններում նախագիծը չի կարող արտացոլել շարադրանքում նշված կարգավորման առարկան: | **Մասամբ է ընդունվել** Նախագիծը խմբագրվել է և Հոդված 1-ի 1-ին մասով ավելացվել է Երիտասարդական քաղաքականության մասին | **Ընդունվել է մասամբ** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | օրենքի կարգավորման առարկան: Ինչ վերաբերում է Երիտասարդական քաղաքականության բացակայությանը, ապա երիտասարդական քաղաքականությունը Կառավարության կողմից ընդունված ծրագրերի և միջոցառումների համակարգ է: Այս պահին պետության կողմից երիտասարդության ոլորտի քաղաքականությունը արտացոլվում է Կառավարության | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ծրագրում, ինչպես նաև Կառավարության կողմից հաստատված մի շարք այլ ռազմավարական բնույթ կրող ծրագրերում (օրինակ՝ «Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին» պետական նպատակային ծրագիր, ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզ, Պետական բյուջետային ծրագրեր և այլն) | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **1-ին ընթերցմամբ ընդունված Հոդված 1, 1-ին մաս կետ 1** | Վերանայել երիտասարդության նվազագույն շեմը՝ այն սահմանելով 15 տարեկանը, ինչն համապատասխանում է ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից որդեգրված չափանիշներին: | **Չի ընդունվել** Նախագծով «Երիտասարդ» հասկացության տարիքային շեմը սահմանվել է հիմք ընդունելով, ոլոտում առկա միջազգային փորձը, վարվող քաղաքականությունը և ոլորտում ներգրավված ոլորտային փորձագետների կարծիքները: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ «Երիտասարդ» հասկացությունը ոչ այնքան կենսաբանակ | **Չի ընդունվել** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ան, որքան սոցիալական պայմանավոր վածություն ունի: Երիտասարդը մանկության և հասունության միջև գտնվող անհատն է՝ անկախ սոցիալ-տնտեսական կարգավիճակից, էթնիկական ինքնությունից, գենդերային կողմնորոշումից ու հաշմանդամությունից, քաղաքական պատկանելությունից կամ ֆիզիկական դիրքից: Նման տարիքային շեմ ընտրելու հիմնավորում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ը տրված է նախագծի հիմնավորման մեջ: Ինչ վերաբերում է 13-17 տարեկան և 18-35 տարեկան անձանց համար մշակվող երիտասարդական ծրագրերին, ապա դրանք կկարգավորվեն օրենքի նախագծի հաստատումից հետո մշակվող ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով՝ բնականաբար ծրագրերը տարանջատելով ըստ տարիքային առանձնահատկությունների: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **1-ին ընթերցմամբ ընդունված Հոդված 1, 1-ին մաս կետ 11** | Վերաշարադրել «Երիտասարդական կենտրոն» հասկացությունը: Արդյոք այն չի՞ կարող անհատի կողմից հիմնադրվել: Սահմանումից հանել լրացուցիչ մանրամասները, այդ թվում՝ «ինտելեկտուալ ժամանց» բառերը, որովհետև «երտասարդական աշխատանք» հասկացությունն արդեն սահմանում է նպատակները: | **Չի ընդունվել** Նախագծում Հոդված 2-ի 11-րդ կետը խմբագրվել է հետևյալ կերպ՝ «11) Երիտասարդական կենտրոն՝ պետության կամ համայնքի կամ ոչ պետական կազմակերպությունների կողմից կամ նրանց միջև երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ իրավաբանական անձի կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող | **Չի ընդունվել** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ֆիզիկական տարածք, որտեղ իրականացվում է երիտասարդական աշխատանք, կազմակերպվում է ինտելեկտուալ ժամանց և իրականացվում են պետական երիտասարդական քաղաքականությունից բխող ծրագրեր և միջոցառումներ:»: Ինչ վերաբերում է «ինտելեկտուալ ժամանց» բառերին, ապա այն որևէ կերպ չի սահմանափակում կենտրոնում իրականացվող գործունեությ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ունը: Միաժամանակ Նախագծի հոդված 2-ի 1-ին մասի 3-րդ կետը խմբագրվել է հետևյալ կերպ՝ «3) երիտասարդական աշխատանք՝ երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացու ձևավորմանն ուղղված աշխատանք, » | |
| 17. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **1-ին ընթերցմամբ ընդունված Հոդված 1, 1-ին մաս կետ 5 և 6** | Նախագծում մի շարք հասկացություններ են գործածվում, որոնք առերևույթ նույնաբովանդակ են, այդ թվում «երիտասարդական ծրագիր» և «երիտասարդական միջոցառումներ» հասկացությունները: Զատել, սահմանել վերջիններիս բովանդակությունը կամ՝ միասնական տարբերակ օգտագործել: | **Ընդունվել է** Նախագիծը խմբագրվել է և Հոդված 2-ի 1-ին մասի 5-րդ կետը խմբագրվե է հետևյալ կերպ՝ «5) երիտասարդ | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ական ծրագիր՝ պետական երիտասարդական քաղաքականությունից բխող պլանավորված միջոցառումների համակարգ, » Միաժամանակ խմբագրվել է նաև Նախագծի Հոդված 2-ի 1-ին մասի 6-րդ կետը հետևյալ կերպ՝ «6) երիտասարդական միջոցառում՝ երիտասարդական ծրագրերի իրականացմանն ուղղված պլանավորված գործողություն, որն | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | իրականացվում է երիտասարդների համար, երիտասարդների կողմից կամ նրանց մասնակցությամբ, » | |
| 18. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **1-ին ընթերցմամբ ընդունված Հոդված 5, 1-ին մաս կետ 6** | Լրացուցիչ մեկնաբանել կամ որոշակիացնել «երիտասարդության բաղադրիչի» կամ դրա վերաբերյալ փորձագիտական վերլուծության հիշատակումը: | **Չի ընդունվել** Նախագծում «երիտասարդության բաղադրիչ» եզրույթը օգտագործվել է նկատի ունենալով այլ գերատեսչությունների կողմից մշակված իրավական, ենթաօրենսդրական, ռազմավարական փաստաթղթերում երիտասարդությանն առնչվող կարգավորումների վերաբերյալ | **Չի ընդունվել** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | փորձագիտական վերլուծություն իրականացնելը, որը կնպաստի պետության կողմից մեկ միասնական քաղաքականության վարելուն | |
| 19. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **Հոդված 5** | Գլուխ 2՝ Նախագծով պետական կառավարման լիազորված մարմնին է պատվիրակած երիտասարդների կարիքների վերաբերյալ ամենամյա հետազոտության իրականացումը: Տարբեր հոդվածներում կիրառված «ուսումնասիրություն», «հետազոտություն», «վերլուծություն», «փորձագիտական վերլուծություն» բառերը նույնականացնել կամ լրացուցիչ մեկնաբանել՝ սահմանելով վերջիններիս չափանիշները: | **Ընդունվել է** Նախագիծը խմբագրվել է և նույնականացվել է նույնաբովանդակ բառերը, մասնավորապես Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «հետազոտություն» բառը փոխարինվել է «ուսումնասիրություն» բառով, ինչպես նաև | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «հետազոտություն» բառը փոխարինվել է «ուսումնասիրություն» բառով: | |
| 20. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **Հոդված 6** | Լրացուցիչ հստակեցման կարիք ունեն Երիտասարդական կենտրոն-պետություն իրավահարաբերությունները, պատասխանատվությունների և լիազորությունների շրջանակը: | **Չի ընդունվել** Երիտասարդական կենտրոնների և պետության միջև իրավահարաբերությունների կարգավորումը սահմանվելու է երնթաօրենսդրական ակտերով, ինչի համար լիազորված մարմնին տրվել է լրազորություն համապատա | **Չի ընդունվել** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | սխան իրավակարգ ավորող փաստաթուղթը մշակելու համար (Հոդված 6, 1-ին մաս 3-րդ կետ) | |
| 21. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **1-ին ընթերցմամբ ընդունված Հոդված 7** | Հստակեցնել «Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի» ձևավորման կարգը, սկզբունքները, պետության կողմից երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմին ճանաչվելու չափանիշները: | Ընդունվել է մասամբ Հաշվի առնելով, որ Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմին չի ստեղծվելու պետության կողմից, այլ ընդհակառակը՝ հանդիսանալու է բացառապես որպես երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքացիական | **Ընդունվել է մասամբ** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | հասարակության կազմակերպությունների համախմբման արդյունք, նպատակահարմար ենք համարում Երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի ընդհանուր նկարագիրը ներկայացնել օրենքի հասկացությունների բաժնում, իսկ երիտասարդական կազմակերպությունների միացյալ մարմնի ընտրության կարգը և պայմանները հաստատելու իրավասությունը վերապահել | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | պետական կառավարման լիազորված մարմնին: | |
| 22. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **1-ին ընթերցմամբ ընդունված Հոդված 8** | Հոդված 8-ի 4-րդ կետում ամրագրված Երիտասարդական կազմակերպությունը իր անվանման մեջ պետք է պարունակի «երիտասարդական» բառը իմպերատիվ հաստատումը հանել, քանի որ արդյունքում ուսանողական կազմակերպությունները զրկվում են երիտասարդական դիտարկվելու հնարավորությունից: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| 23. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **1-ին ընթերցմամբ ընդունված Հոդված 9** | Հոդված 9-ում սահմանել ժամկետներ՝ Պետական երիտասարդական քաղաքականության եռամյա կամ հնգամյա ծրագիրը մշակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության, երիտասարդական քաղաքականության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը և ներկայացնում ԱԺ հաստատմանը: | **Չի ընդունվել** Նախագծի անցումային դրույթներում՝ Հոդված 11 2-րդ մասով սահմանվել է որ «2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:» | **Չի ընդունվել** |
| **«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 24. | Կառավարություն | **Վերնագիր** | Վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառի փոխարեն լրացնել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառը՝ հաշվի առնելով, որ նախագծում կատարվում են մեկից ավելի լրացումներ | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| 25. | Կառավարություն | **1-ին հոդված** | 1. 1-ին հոդվածում ***«18-րդ հոդվածի 41-րդ մասը»*** բառերն անհրաժեշտ է փոխարինել *«18-րդ հոդվածի 1-ին մասը 41.8-րդ կետից հետո»* բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:<br>***2. «տեղական» բառի փոխարեն լրացնել «համայնքի» բառը, հաշվի առնելով, որ բոլոր երեք նախագծերում էլ օգտագործվում է «համայնքի երիտասարդական քաղաքականություն» եզրույթը, ուստի անհրաժեշտ է պահպանել նախագծերի նույն եզրույթների կիրառելիությունը*** | **Ընդունվել է**<br>**Ընդունվել է** | **Ընդունվել է**<br>**Ընդունվել է** |
| 26. | Կառավարություն | **2-րդ հոդված** | Առաջարկում ենք լրացնել նոր 2-րդ հոդված՝<br>«Հոդված 2. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի վերջում կիրառված «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 1-ին մասը լրացնել 7-րդ և 8-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.<br>7) օրինակելի կանոնադրության հիման վրա ավագանու որոշմամբ համայնքի ղեկավարը հաստատում է համայնքի կողմից ստեղծվող երիտասարդական կենտրոնի կանոնադրությունը.<br>8) հաստատում է համայնքի կողմից ստեղծվող երիտասարդական կենտրոնի գործունեության տարեկան կամ բազմամյա ծրագիրը:»<br>Լրացումը պայմանավորված է **«Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի նախագծի 6-րդ (Լրամշակված** 7-րդ հոդվածի) 1-ին մասի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերի կարգավորումներով:<br>Ըստ այդմ հոդվածների հանմարակալումը վերանայնվել | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | է: | | |
| 27. | Կառավարություն | **Հոդված 2 (Լրամշակված 3)** | **2-րդ (Լրամշակված 3-րդ)** հոդվածում՝ «համայնքի աշխատակազմի որևէ աշխատողներից մեկի» բառերն անհրաժեշտ է փոխարինել *«համայնքի աշխատակազմի աշխատողներից առնվազն մեկի»* բառերով՝ համապատասխանեցնելով Նախագիծ 1-ի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բովանդակությանը: **Միևնույն ժամանակ՝ «համայնքի հայեցողությամբ» բառերի փոխարեն լրացնել «համայնքի ղեկավարի հայեցողությամբ» բառերը:** | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| 28. | Կառավարություն | **Հոդված 3 (Լրամշակված 4)** | **3-րդ (Լրամշակված 4)-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել, միևնույն ժամանակ 3-րդ մասում՝ հաշվի առնելով նախագծի խմբագրումը՝ «2-րդ» հոդվածի հղումը փոխարինել «3-րդ» հոդվածով:** | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| 29. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **Հոդված 2** | ՏԻՄ-երում Երիտասարդական աշխատողի ինստիտուտը՝ որպես իմպերատիվ լիազորություն, փոխկապակցված չէ Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքին: | **Ընդունվել է** Երիտասարդական աշխատողի ինստիտուտի վերաբերյալ իրավակարգավորումները միանման մոտեցմամբ արտացոլելու նպատակով «Տեղական ինքնակառավարման | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում խմբագրվել է Հոդված 2-ի 3-րդ մասի երկրորդ նախադասությունը հետևյալ կերպ՝ «Համայնքի ղեկավարը համայնքում երիտասարդական քաղաքականության մշակումն ու իրականացումն ապահովելու նպատակով համայնքի աշխատակազմի աշխատողներից առնվազն մեկի գործառույթն | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | երում սահմանում է երիտասարդական աշխատողի գործառույթները կամ համայնքի հայեցողությամբ առանձնացնում երիտասարդական աշխատողի առնվազն մեկ հաստիք:» | |
| **«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»** | | | | | |
| 30. | Կառավարություն | **Վերնագիր** | Վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառի փոխարեն լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառը՝ հաշվի առնելով նախագծի բովանդակությունը: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| 31. | Կառավարություն | **Հոդված 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ** | «կետադրական նշանով» բառերից հետո առաջարկում ենք լրացնել<br>«և 1-ին մասը» բառերը: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| 32. | Կառավարություն | **Հոդված 2-րդ** | 2-րդ հոդվածով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի նոր լրացվող 12-րդ կետում *«կազմում է Երևան քաղաքի երիտասարդական քաղաքականությունը»* բառերն անհրաժեշտ է փոխարինել ***«մշակում է*** *Երևան* | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *քաղաքի երիտասարդական քաղաքականությունը»* բառերով՝ համապատասխանեցնելով «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բովանդակությանը: | | |
| 33. | Կառավարություն | **Հոդված 4-րդ** | 1. 2-րդ մասում «ենթակետով» բառի փոխարեն լրացնել «կետերով» բառը,<br>2. 3-րդ մասում՝ «իրականացման համար» բառերից հետո լրացնել «աջակցում է» բառերը,<br>«գործում է Երևան» բառերի փոխորեն լրացնել «գործող Երևան»,<br>իսկ «երիտասարդական կենտրոնի» բառերից հետո լրացնել «մասնաճյուղի գործունեությանը» բառերը:<br><u>Փոփոխության առաջարկը պայմանավորված է տվյալ հոդվածի շարահյուսությունը ավելի հստակ և հասկանալի շարադրելու մտադրությամբ:</u><br>3. 4-րդ մասի առաջին նախադասության «առաջարկ է ներկայացնում քաղաքապետին» բառերը առաջարկում ենք լրացնել նախադասության սկզբից, միևնույն ժամանակ՝ «աշխատակազմի» բառից հետո լրացնել «աշխատակիցներից» բառը:<br><u>Փոփոխության առաջարկը պայմանավորված է տվյալ հոդվածի շարահյուսությունը ավելի հստակ և հասկանալի շարադրելու մտադրությամբ:</u> | **Ընդունվել է**<br><br>**Ընդունվել է**<br><br>**Ընդունվել է** | **Ընդունվել է**<br><br>**Ընդունվել է**<br><br>**Ընդունվել է** |